ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 93/94: 008:39
ԳՄԴ 63.3+71+63.5
Հ 304

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Կուրս՝ 1-ին
Կիսամյակ՝ 2-րդ
Կրեդիտ՝ 3
Ժամաքանակ՝ 35, որից.
Դասախոսություն՝ 30 ժամ, երկու ընթացիկ քննություն՝ 5 ժամ

Կազմող՝ Ա. Եղիազարյան

Հ 304 *Մագիստրատուրայի ծրագիր: Հայրենիք-սփյուռք հարաբերությունները արդի փուլում/կազմող՝ Ա. Եղիազարյան: Եր., ԵՊՀ հրատ., 2020, 32 էջ:*

Ծրագրում ներկայացվում են «Հայրենիք-սփյուռք հարաբերությունները արդի փուլում» դասընթացի նպատակն ու խնդիրները, նախատեսվող կրթական արդյունքը, գիտելիքների ստուգման կարգը և տրվում մեթոդական ցուցումներ: Առանձնաբար լուսաբանվում են դասընթացի թեմաները և թեմատիկ ուղղությունները: Ներկայացվում է նաև պարտադիր և օժանդակ գրականության ցանկը:

Ծրագիրը նախատեսված է հումանիտար ոլորտի կրթական ծրագրերում ընդգրկված մասնագետ-դասախոսների և ուսանողների համար:

ՀՏԴ 93/94: 008:39
ԳՄԴ 63.3+71+63.5

ISBN 978-5-8084-2441-8

© ԵՊՀ հրատ., 2020 թ.
© Կազմողի համար, 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հայրենիք-սփյուռք հարաբերությունները արդի փուլում» դասընթացի նպատակը 5
Դասընթացի խնդիրները 5
Դասընթացում կիրառվող հասկացությունները 5
Կրթական արդյունքը 6
Մեթոդական ցուցումներ 6
Գնահատման կարգը 7
Դասընթացի թեմատիկ բովանդակությունը՝ ըստ ժամաքանակի.....8
Ներածություն 10
Թեմա 1. Հայրենիք-սփյուռք հարաբերությունների 100-ամյա պատմության պարբերացումը.....12
Թեմա 2. Հայկական սփյուռքը XX դարում. ընդհանուր նկարագիր 13
Թեմա 3. Հայրենիք-սփյուռք հարաբերությունները հայաստանի առաջին հանրապետության շրջանում.....14
Թեմա 4. Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1921-1937 թթ.....15
Թեմա 5. Սփյուռքի հետ կապերի վերականգնումը երկրորդ աշխարհամարտի ընթացքում 16
Թեմա 6. Մեծ հայրենադարձությունը (1946-1948 թթ.).....17
Թեմա 7. Մշակութային կապերի հայկական ընկերության գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1945-1964 թթ.....18
Թեմա 8. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1964-1988 թթ. 19
Թեմա 9. Հայրենիք-սփյուռք հարաբերությունները արցախյան շարժման նոր փուլում և Հայաստանի անկախացման գործընթացում (1988-1991 թթ.) 20

Թեմա 10. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը և հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր փուլի սկզբնավորումը (1991-1998 թթ.) 21
Թեմա 11. Հայաստան-սփյուռք երեք խորհրդաժողովների դերը հայրենիք-սփյուռք կապերի սերտացման գործում.....22
(1998-2008 ԹԹ.) 22
Թեմա 12. Հայրենիք-սփյուռք հարաբերությունները XXI դարի սկզբին 23
ՊԱՐՏԱԴԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....24
ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....27

«ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Առարկայի նպատակը ուսանողներին հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդի փուլի մասին համապարփակ և խորքային գիտելիքներ փոխանցելն է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացն ունի հետևյալ խնդիրները՝

- հստակեցնել հայրենիք-սփյուռք հարաբերությունների էությունը և նշանակությունը,
- նկարագրել հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը,
- լուսաբանել այդ հարաբերությունների գլխավոր շրջափուլերը և հիմնական առանձնահատկությունները,
- բացահայտել հայրենիք-սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները շրջափուլերից յուրաքանչյուրում,
- պարզաբանել հայրենիքում ստեղծված՝ սփյուռքի հետ հարաբերությունների պատասխանատու մարմիններից յուրաքանչյուրի գործունեությունը, ձեռքբերումները և բացթողումները,
- ներկայացնել հայրենիք-սփյուռք հարաբերությունների ներկա փուլի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները:

ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասընթացում կիրառվում են հետևյալ հիմնական հասկացությունները. *սփյուռքագիտություն, գաղթաշխարհ, ցրոնք, գաղթավայր, գաղթօջախ, սփյուռք, սփյուռքացում, համայնք, հայրենիք-սփյուռք հարաբերություններ, փոխառնչություն, գերակա ուղղություններ, հայապահպանություն, պարբերացում, շրջափուլ, հայրենադարձության կառուցակարգեր, ներգաղթ, «առաջադիմական հոսանք»*:

ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա՝

- ներկայացնել հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմությունը,
- պարբերացնել հայրենիք-սփյուռք հարաբերությունները և հստակեցնել չափորոշիչները,
- գնահատել հայրենիք-սփյուռք հարաբերությունների ձեռքբերումներն ըստ ոլորտների և զարգացման հիմնական ուղղությունների:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Դասընթացը կազմակերպվում է դասախոսությունների միջոցով, որոնց ընթացքում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ նախատեսված թեմաներով:

Ակտիվ ուսումնառության մոտեցման շրջանակներում ապահովվում է ուսանողների պարբերական-անընդհատ մասնակցությունը դասընթացին:

Մոտեցման շրջանակներում շեշտադրվում է ուսումնառման գործընթացի հիմնական նպատակը՝ ուսանողների շրջանում գիտելիքներ, կարողություններ և աշխարհընկալում ձևավորելը: Ընդհանուր առմամբ, ակտիվ ուսումնառությունը նախատեսում է, որ ուսանողը պետք է լսելուց բացի ընթերցի, գրի, քննարկի, ինչպես նաև մասնակցի որոշակի խնդիրների լուծման աշխատանքներին: Այդ նպատակով դասընթացին մասնակից ուսանողների շրջանում զարգացվում են մտածողության այնպիսի բարդ մակարդակներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը և գնահատումը:

Հատկապես խրախուսվում է քննարկումը՝ որպես ակտիվ ուսումնառության կարևոր ռազմավարություն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Կիսամյակի ընթացքում ուսանողների գիտելիքները ստուգվում են երկու ընթացիկ քննությունների միջոցով:

Քննություններից մեկը իրականացվում է բանավոր, իսկ մյուսը՝ գրավոր հարցման միջոցով: Երկու դեպքում էլ հարցատոմսում ընդգրկվում է երկու հարց՝ յուրաքանչյուրը 5 միավոր արժեքով:

Մեկ ուսանողի ընդհանուր առավելագույն գնահատականը 20 միավոր է:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԺԱՄԱՔԱՆԱԿԻ

	Դասընթացի թեմաների անվանումը	ժամաքանակը
1.	*Հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը:*	2 ժամ
2.	*Հայկական սփյուռքը XX դարում. ընդհանուր նկարագիր:*	2 ժամ
3.	*Հայրենիք-սփյուռք հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության շրջանում:*	2 ժամ
4.	*Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1921-1937 թթ.:*	2 ժամ
5.	*Սփյուռքի հետ կապերի վերականգնումը Երկրորդ աշխարհամարտի ընթացքում:*	2 ժամ
6.	*Մեծ հայրենադարձությունը (1946-1948 թթ.):*	2 ժամ
7.	*Մշակութային կապերի հայկական ընկերության գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1945-1964 թթ.:*	2 ժամ
8.	*Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը և հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1964-1988 թթ.:*	4 ժամ
9.	*Հայրենիք-սփյուռք հարաբերությունները Արցախյան շարժման նոր փուլում և Հայաստանի անկախացման գործընթացում (1988-1991 թթ.):*	2 ժամ
10.	*Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը և հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր փուլի սկզբնավորումը (1991-1998 թթ.):*	4 ժամ

11.	*Հայաստան-սփյուռք երեք խորհրդաժողովների դերը հայրենիք-սփյուռք կապերի սերտացման գործում:*	2 ժամ
12.	*Հայրենիք-սփյուռք հարաբերությունները XXI դարի սկզբին:*	4 ժամ
Ընդամենը		30 ժամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը 1918 թ. նոր էջ բացեց հայոց պատմության մեջ: Անկախ պետության ստեղծումը և նրա հետագա զարգացումն ու կերպափոխումը զգալի ազդեցություն ունեցան հայկական սփյուռքի ձևավորման վրա: Այնուհետև սկիզբ առան Հայաստանի Հանրապետություն-սփյուռք հարաբերությունները, որոնք 100 տարիների ընթացքում անցել են երեք խոշոր փուլեր՝ Հայաստանի առաջին, խորհրդային (երկրորդ) և երրորդ հանրապետությունների պատմաշրջանները:

Ժամանակային ընդգրկման առումով այդ փուլերը հավասարաչափ չեն, ուստի դրանցից յուրաքանչյուրն ունի նաև բովանդակային տարբեր խորություն: Եթե Հայաստանի առաջին հանրապետությունը գոյատևեց թեև ճակատագրական իրադարձություններով լեցուն, բայց միայն երկուսուկես տարի, ապա Հայաստանի խորհրդային հանրապետությունը՝ շուրջ 70 տարի: Ինչ վերաբերում է Հայաստանի երրորդ հանրապետությանը, ապա վերջինս արդեն ունի շուրջ 30-ամյա կենսագրություն:

Սփյուռքի հետ հարաբերությունների առումով երեք հանրապետություններն էլ ունեցել են հարուստ կենսափորձ: Հայաստանի առաջին հանրապետությունն ըստ էության այդպես էլ չկարողացավ սփյուռքի հետ հարաբերություններում արձանագրված ձեռքբերումները հասցնել վերջնական հանգրվանի, և ծրագրերի հիմնական մասը մնաց անավարտ: Սակայն հենց այդ շրջանում շեշտադրված՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունների հիմնական գերակայությունները մնացին անփոփոխ հետագա տասնամյակների ընթացքում:

Խորհրդային շրջանում այդ հարաբերությունները, չնայած գաղափարաբանական և քաղաքական երբեմն նույնիսկ բիրտ սահմանափակումներին, արձանագրեցին էական հաջողություններ, որոնց գրավականը Խորհրդային Հայաստանում սփյուռքի հետ հարաբերությունները զարգացնելու նպատակով ստեղծված կազմակերպությունների (Հայաստանի օգնության կոմիտե, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերություն, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե) երկարամյա գործունեությունն էր: Այս շրջանն աչքի ընկավ նաև զանգվածային

հայրենադարձության իրականացմամբ, երբ երեք հիմնական փուլերով Խորհրդային Հայաստան տեղափոխվեցին ավելի քան 160 հազար հայեր:

Հայաստանի երրորդ հանրապետությունն էլ իր հերթին անցել է սփյուռքի հետ հարաբերությունների երեք ուրույն՝ նորովի հարաբերությունների ձևավորման (1991-1998 թթ.), կապերի վերարժևորման (1998-2008 թթ.) և համապարփակ հարաբերությունների ձևավորման (2008 թվականից սկսած) ենթափուլեր: Այս ենթափուլերի ընթացքում հիմնական ձեռքբերումներ եղել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի և ՀՀփյուռքի նախարարության (2019 թվականից՝ ՀՀ կառավարության աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ) ստեղծումը, Հայաստան-սփյուռք 6 խորհրդաժողովները (1999 թ., 2002 թ., 2006 թ., 2011 թ., 2014 թ., 2017 թ.) անցկացումը, որոնց շնորհիվ հայրենիք-սփյուռք հարաբերությունները բարձրացվել են որակական նոր մակարդակի:

Թեմա 1
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 100-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Դասընթացի տեսանկյունից հույժ կարևոր է հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը, որի հիմնական նպատակը այդ հարաբերությունների առանձին պարբերաշրջանների էության ու առանձնահատկությունների բացահայտումն ու ըմբռնումն է: Վերջիններից բխեցնելով և ելնելով բովանդակային զարգացումներից՝ իրականացվում է նաև ներքին պարբերացում՝ ըստ առանձին ենթափուլերի:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը հնարավորություն է տալիս լավագույնս պատկերացնել այդ հարաբերությունների էութենական բնութագրերը, յուրահատկություններն ու ընդհանրությունները, բացահայտել ձեռքբերումներն ու բացթողումները, գնահատել դրանց վրա ազդող իրողությունները:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. հայրենիք-սփյուռք կապերի խնդիրը,
2. հայրենիք-սփյուռք հարաբերությունների սուբյեկտներն ու օբյեկտները,
3. հայրենիք-սփյուռք հարաբերությունների պարբերացման հիմնական սկզբունքները,
4. հարաբերությունների պարբերացումն ըստ հայկական երեք հանրապետությունների գոյության ժամանակաշրջանների իրականացնելու սկզբունքը,
5. հայրենիք-սփյուռք հարաբերությունների գլխավոր շրջափուլերի ենթաբաժանումը:

Թեմա 2
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ XX ԴԱՐՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

XX դարում հայկական սփյուռքի ընդհանուր նկարագրի հստակեցումը կարևոր է հայրենիք-սփյուռք հարաբերությունների ընթացքի, զարգացումների, արդյունքների և բացթողումների ճանաչողության տեսանկյունից: Մյուս կողմից արդիական ու կարևոր է արդի հայկական սփյուռքի՝ որպես ցեղասպանության հետևանք հանդես գալու իրողությունների լուսաբանումը:

Նշվածի ենթատեքստում կարևորվում է հայկական սփյուռքի ընդհանուր նկարագրի լուսաբանումը մինչև Հայոց ցեղասպանությունը և դրանից հետո, նկարագրերի համեմատությամբ այն առանձնահատկությունների բացահայտումը, որոնց հիմամբ արդի հայկական սփյուռքը համարվում է Հայոց ցեղասպանության հետևանք: Այդ առանձնահատկություններից մեկն էլ արդի հայկական սփյուռքի ներքին կառուցվածքի վերլուծումն է, այնտեղ առկա կազմակերպական համակարգերի բովանդակության պարզաբանումը:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. հայկական սփյուռքի ձևավորումը,
2. հայկական սփյուռքը՝ որպես Հայոց ցեղասպանության հետևանք,
3. գաղթաշխարհի հայության թվաքանակի բազմապատկումը և սահմանների ծավալումը Հայոց ցեղասպանությունից հետո,
4. հայ գաղթականության սփյուռքացման գործընթացը 1920-1940-ական թթ.,
5. համասփյուռքյան կազմակերպությունների գործունեության ծավալումը սփյուռքում,
6. սփյուռքյան «Հոգևոր Հայաստանը»,
7. սփյուռքը՝ որպես հայկական համակեցական միջավայր,
8. սփյուռքի պատմության հիմնական փուլերը:

Թեմա 3
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների առաջին փուլը նշանավորվեց Հայաստանի անկախության վերականգնման պայմաններում հայրենիք-սփյուռք փոխադարձ դերի արժևորմամբ: Այդ ժամանակ երկկողմ հարաբերություններում սահմանվեցին գերակայություններ, որոնք հետագայում ընդհանուր առմամբ մնացին անփոփոխ:

Մասնավորաբար կարևորվում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների սկզբնավորման գործընթացը, սահմանված գերակա ուղղությունները, համագործակցության արդյունավետությունը տարբեր ասպարեզներում, սփյուռքի աջակցությունը հայրենի պետությանը, ներգաղթի գործընթացը և այլ կարևոր իրողություններ:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը և սփյուռքը,
2. հայրենիք-սփյուռք հարաբերությունների առանձնահատկությունները Հայաստանի առաջին հանրապետության շրջանում,
3. սփյուռքի դերը Հայաստանի առաջին հանրապետության տեսանկյունից,
4. սփյուռքի տնտեսական օգնությունը Հայաստանի Հանրապետությանը,
5. ներգաղթի և հայրենադարձության հիմնահարցերը 1918-1920 թթ.,
6. մասնագետների հայրենադարձման մոտեցումը Առաջին հանրապետության շրջանում,
7. հայրենիք-սփյուռք քաղաքական երկխոսությունը ապագա Հայաստանի սահմանների շուրջ:

Թեմա 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1921-1937 ԹԹ.

Թեմայի շրջանակներում ներկայացվում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների խորհրդային շրջանի առաջին ենթափուլում՝ 1921-1937 թթ., տեղի ունեցած իրադարձությունները, որոնց մեջ առանցքային նշանակություն ունեցավ Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումը:

Այդ տեսանկյունից հատկապես կարևոր են Կոմիտեի գործունեության ձեռբերումներն ու թերացումները, դրանց պատճառներն ու հետևանքները: Արժեքավոր են նաև 1920-1930-ական թթ. կազմակերպված զանգվածային հայրենադարձության իրողությունները:

Ժամանակաշրջանը լեցուն էր նաև ներքին հակասություններով, մասնավորապես Խորհրդային Հայաստանի ղեկավարության՝ սփյուռքյան կազմակերպությունների նկատմամբ խտրական մոտեցումը, դրանից ածանցված ներքին երբեմն արյունալի հակամարտությունը:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Հայաստանի հանրապետության խորհրդայնացումը և նախկին քաղաքական ղեկավարության արտագաղթը,
2. քաղաքական փոխակերպումները սփյուռքում 1920-30-ական թթ.,
3. Խորհրդային Հայաստանի ղեկավարության մոտեցումները սփյուռքի նկատմամբ:
4. Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեությունը,
5. ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծումը արտերկրում և գործունեության քաղաքական և ներազգային ուղղությունները,
6. Հայաստանի վերաշինման գործընթացը և Հայաստանի օգնության կոմիտեն,
7. հայրենիք-սփյուռք հարաբերությունների խզման գործընթացը,
8. հայրենադարձությունը 1921-1937 թթ.:

Թեմա 5
ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թեմայի առանցքում Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերականգնման, դրա դրդապատճառների և սփյուռքի՝ Խորհրդային Միությանը ցուցաբերած բազմակողմ ու բազմաբնույթ օգնության ներկայացումն է:

Լուսաբանվում են ԽՍՀՄ-ի ղեկավարության դիրքորոշման փոփոխությունը սփյուռքի նկատմամբ, դրա պատճառները, խորհրդահայ մտավորականության դիրքորոշումը, Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը և այլ կարևոր իրողություններ:

Կարևոր է այն իրողությունը, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին արտասահմանի հայկական քաղաքական հոսանքների որոշակի ներկայացուցիչներ, վտանգված եվրոպահայությանն աջակցելու նպատակով, կապերի մեջ են մտել նացիստների հետ: Այդ գործընթացի ներկայացումը կոչված է նպաստելու ուսանողների շրջանում հայրենիք-սփյուռք հարաբերությունների և դրանց վրա տարբեր իրողությունների ազդեցության վերաբերյալ իմացությունների խորացմանը:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Երկրորդ աշխարհամարտը և հայկական սփյուռքը,
2. սփյուռքի ներկայացուցիչների և նացիստների միջև համագործակցության խնդիրը,
3. ԽՍՀՄ-ի ղեկավարության ակնկալիքները սփյուռքից,
4. Հայ առաքելական եկեղեցու դերը սփյուռքի աջակցությունը ԽՍՀՄ-ին կազմակերպելու և ապահովելու գործում,
5. սփյուռքի նյութական և քաղաքական օգնությունը ԽՍՀՄ-ին Երկրորդ աշխարհամարտի ընթացքում,
6. սփյուռքի միջոցներով «Սասուցի Դավիթ» տանկային երկու շարասյուների ստեղծումը:

Թեմա 6
ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ (1946-1948 ԹԹ.)

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների խորհրդային շրջափուլում հույժ կարևորվում է մեծ հայրենադարձության և նրա հետ առնչվող հիմնահարցերի լուսաբանումը: Խնդիրն այն է, որ հայրենադարձությունը, նախապես ծրագրված լինելով խորհրդային ղեկավարության կողմից որպես նրանց աշխարհաքաղաքական նկրտումների իրականացման գործիք, ի վերջո այդ նպատակին չծառայեց, բայց Խորհրդային Հայաստանի առումով ունեցավ պատմական խոշոր նշանակություն, քանի որ նպաստեց երկրի ժողովրդագրական հիմնահարցերի կարգավորմանը, ինչպես նաև հայապահպանության խնդրին:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվելու են հայրենադարձության գործընթացի կարևոր բաղադրիչները, իրականացման մեխանիզմները, արդյունքներն ու բացթողումները:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Մեծ հայրենադարձության իրականացման գաղափարի հասունացումը Հայաստանի ղեկավար շրջանակներին,
2. սփյուռքահայության զանգվածային ներգաղթ կազմակերպելու ԽՍՀՄ-ի աշխարհաքաղաքական շարժառիթները,
3. հայրենադարձության գործընթացի սկզբնավորումը, ընթացքը և արդյունքները,
4. Խորհրդային Հայաստանում ներգաղթող հայրենակիցների համար ստեղծվող պայմանները,
5. հայրենադարձները Խորհրդային Հայաստանում. ինտեգրման առանձնահատկությունները և խոչընդոտները,
6. հայրենադարձության կասեցումը և դրա հետևանքները սփյուռքում:

Թեմա 7
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945-1964 ԹԹ.

Թեմայի նպատակը հետպատերազմյան երկու տասնամյակներում սփյուռքի նկատմամբ խորհրդային ղեկավարության ուշադրության աճի, դրա հետևանքով Մշակութային կապերի հայկական ընկերության ստեղծման և վերջինիս առաջ դրված քաղաքական և այլ նպատակների ներկայացումն է:

Լուսաբանվում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների էությունը, նպատակներն ու գերակա ուղղությունները 1945-1964 թթ.: Այդ ժամանակաշրջանում ձևավորվեցին բոլոր այն նախադրյալները, որոնց հիման վրա 1964 թվականից ի վեր հայրենիք-սփյուռք հարաբերությունները աննախադեպ սերտացան և զգալի արդյունքներ արձանագրեցին, թեև սփյուռքահայ կազմակերպությունների նկատմամբ խորհրդային ղեկավարության խտրական վերաբերմունքը պահպանվեց:

Թեմայի շրջանակներում ներկայացվելու են նաև հայրենադարձության գործընթացը 1950-1960-ական թթ. և դրա ալիքի թուլացման պատճառները:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. սփյուռքի հետ կապերի վերականգնման ԽՍՀՄ-ի ղեկավարության շարժառիթները,
2. հայրենիք-սփյուռք կապերի վերականգնման գործընթացը,
3. Մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՍ) ստեղծումն ու նպատակները,
4. ընկերության գործունեությունը և վերաբերմունքը սփյուռքահայ կազմակերպությունների նկատմամբ,
5. ընկերության գործունեության արդյունքները,
6. սփյուռքի՝ որպես քաղաքական գործիքի ընկալումը խորհրդային ղեկավարության կողմից,
7. հայրենադարձությունը 1950-1960-ական թթ.:

Թեմա 8
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1964-1988 ԹԹ.

1960-ական թթ. Մշակութային կապերի հայկական ընկերության գործունեությունն այնքան էլ արդյունավետ չէր համարվում, որի պատճառով առաջանում էր սփյուռքի հետ հարաբերությունների նոր մարմնի ստեղծման անհրաժեշտություն:

Թեմայի շրջանակներում ներկայացվում են Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծման գործընթացը, հայ մտավորական և հասարակական լայն շրջանակների մասնակցությունը, ինչպես նաև սփյուռքահայ հատվածների արձագանքը, հայրենիք-սփյուռք հարաբերություններում առկա սահմանափակումները:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների այս ենթափուլում արձանագրվել են կարևոր արդյունքներ կապերի սերտացման, փոխօգնության, սփյուռքում առկա խնդիրների լուծմանը նպաստելու, փոխադարձ ճանաչողության, ինտեգրման և այլ ուղղություններով:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. հայրենիք-սփյուռք հարաբերությունները նոր որակի բարձրացնելու անհրաժեշտության խնդիրը 1960-ական թթ. սկզբին,
2. հայ մտավորականության ավանդը կոմիտեի ստեղծման և նպատակների սահմանման գործում,
3. կոմիտեի նպատակները և գործունեության հիմնական ուղղությունները,
4. կոմիտեի աջակցությունը սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, երիտասարդների բարձրագույն կրթության կազմակերպման գործում,
5. հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացումը Կոմիտեի գործունեության տարիներին,
6. հայրենիք-սփյուռք գիտամշակութային առնչությունները:

Թեմա 9
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1988-1991 ԹԹ.)

Թեմայի շրջանակներում լուսաբանվում են հայրենիք-սփյուռք հարաբերություններում 1988 թվականից ի հայտ եկող նոր միտումները, որոնք բերեցին այդ հարաբերություններում սահմանափակումների աստիճանաբար վերացմանը:

Ներկայացվում են այնպիսի կարևոր իրողություններ, ինչպիսիք են սփյուռքյան ավանդական կառույցների վերադարձը կամ տեղափոխումը հայրենիք, աջակցությունը արցախյան շարժմանը, 1988 թ. երկրաշարժից հետո սփյուռքի համախմբմանը Աղետի գոտուն աջակցելու գաղափարի շուրջ:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների այս ենթափուլում վերարժևորվեց սփյուռքի և սփյուռքահայ կազմակերպությունների դերը և նշանակությունը, փոխվեց հայրենիք-սփյուռք հարաբերությունների բովանդակությունը:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Արցախյան շարժման նոր փուլը և սփյուռքը,
2. 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը և աղետյալ շրջաններին աջակցելու գործում սփյուռքի համախմբումը,
3. Սփյուռքահայության հետ մշակութային կապի Կոմիտեի գործունեությունը նոր պայմաններում,
4. նոր մոտեցումներ հայրենիք-սփյուռք հարաբերություններին. առանց քաղաքական սահմանափակումների հարաբերությունների հաստատման սկզբունքի որդեգրումը,
5. սփյուռքահայ կուսակցությունների գործունեության սկզբնավորումը հայրենիքում:

Թեմա 10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1991-1998 ԹԹ.)

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով 1991 թ. սկիզբ առավ հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդի փուլը: Թեմայի շրջանակներում ներկայացվում են այնպիսի կարևոր իրադարձություններ, ինչպիսիք են սփյուռքյան ավանդական կառույցների ներգրավումը հայաստանյան կյանքին, սփյուռքյան կազմակերպությունների նկատմամբ նոր քաղաքականության որդեգրումը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումն ու ձեռքբերումները, հայրենիք-սփյուռք հարաբերություններում առաջացած հակասությունները:

Չնայած բացթողումներին, որոնք հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացումը զգալիորեն կասեցրեցին, այս ենթափուլում արձանագրվեցին նաև էական հաջողություններ, մասնավորաբար Հայաստանի Հանրապետությանը և Արցախին սփյուռքի նյութական աջակցության, Արցախյան պատերազմին սփյուռքահայության մասնակցության, արտերկրում ՀՀ շահերի պաշտպանության գործում սփյուռքի ներգրավման և այլ հարցերում:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքական անկախության վերականգնումը և սփյուռքի վերաբերյալ նոր «օրակարգը»,
2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումը և գործունեության հիմնական ուղղությունները,
3. հայրենիք-սփյուռք հարաբերությունների առաջնահերթությունները 1991-1998 թթ.,
4. սփյուռքահայերի մասնակցությունը Արցախյան պատերազմին,
5. հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման խոչընդոտները:

Թեմա 11
ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԵՐԵՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ՍԵՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1998-2008 ԹԹ.)

Թեմայի շրջանակներում ներկայացվում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման համար կարևոր՝ 1999 թ., 2002 թ. և 2006 թ. տեղի ունեցած Հայաստան-սփյուռք երեք խորհրդաժողովները, դրանց ընթացքը և ձեռքբերումները:

Լուսաբանվում են այնպիսի կարևոր իրողություններ, ինչպիսիք են հարաբերությունների սերտացումը, սահմանափակումների վերացումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման օրակարգ բերելն ու այլ իրադարձություններ:

Խոսվում է նաև այնպիսի կարևոր իրողության մասին, ինչպիսին է Հայաստան-սփյուռք առաջին խորհրդաժողովի արդյունքում ռուսահայության շրջանում համախմբման նոր գործընթացների ի հայտ գալը, երբ հիմնադրվեց Ռուսաստանի հայերի միությունը:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. հայրենիք-սփյուռք հարաբերությունների 1998-2008 թթ. պարբերաշրջանի հիմնական բնութագիրը,
2. հայրենիք-սփյուռք երեք խորհրդաժողովների հրավիրումը, նպատակներն ու արդյունքները,
3. հայրենիք-սփյուռք ընդհանուր օրակարգի ձևավորման խնդիրը,
4. սփյուռքահայ կազմակերպությունները ՀՀ քաղաքական համակարգում,
5. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման խնդիրը հայրենիք-սփյուռք հարաբերությունների օրակարգում,
6. սփյուռքահայերի բարեգործական գործունեությունը ՀՀ-ում և Արցախում:

Թեմա 12
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Դասընթացի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերջին տարիների իրողությունները, որոնց մեջ մասնավորաբար առանձնացվում են ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումն ու գործունեության հիմնական ուղղություններում ունեցած ձեռքբերումները, հայրենիք-սփյուռք քաղաքական երկխոսության մեջ առաջացած հակասությունները, ընդհանուր օրակարգի մշակմանը միտված աշխատանքները, համահայկական խորհրդի ձևավորման ծրագիրը և այլ անհրաժեշտ գիտելիքներ:

Հույժ կարևոր է այն իրողությունը, որ խնդրո առարկա ենթափուլում ի վերջո կյանքի կոչվեց դեռևս 1980-ական թթ. քննարկման թեմա դարձած Սփյուռքի նախարարությունը՝ որպես հայրենիք-սփյուռք հարաբերությունների աննախադեպ սերտացման արտահայտություն:

Թեմայի շրջանակներում ուսանողներին ներկայացվում են գիտելիքներ հետևյալ ուղղություններով՝

1. հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդի փուլի առանձնահատկությունները,
2. սփյուռքի հետ հարաբերությունների կառուցման հիմնական սկզբունքները,
3. ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը, նպատակներն ու խնդիրները,
4. ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հիմնական ուղղությունները,
5. հայրենադարձության հարցը արդի փուլում,
6. ՀՀ քաղաքականությունը սփյուռքում հայապահպանության հարցում,
7. հայրենիք-սփյուռք հարաբերությունների հնարավորությունները և խոչընդոտները,
8. հայրենիք-սփյուռք կրթագիտական և մշակութային առնչությունները:

ՊԱՐՏԱԴԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բաղալյան Ա.**, Խորհրդային Հայաստան-սփյուռք կապերի պատմության փուլերը, «Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Հայկարլի» ՍՊԸ տպարան, 2011, էջ 69-76:
2. **Բահարյան Վ.**, Հայաստան-սփյուռք համաժողով և հայաստանյան օրագիր, Ե., «Զանգակ-97», 2001:
3. **Դալլաքյան Կ.**, Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., «Զանգակ-97», 2004:
4. **Եղիազարյան Ա.**, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության գործունեության հիմնական ուղղությունները 1944-1964 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 2016, N 3, էջ 78-85:
5. **Եղիազարյան Ա.**, Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», տարեգիրք, 2013, թիվ 2, էջ 3-28:
6. **Եղիազարյան Ա.**, Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», 2014, N 2, էջ 33-51:
7. **Եղիազարյան Ա.**, Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության հաստատումը սփյուռքում. «Հոգևոր Հայաստանի» ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Հայկարլի» ՍՊԸ տպարան, 2011, էջ 41-52:
8. **Եղիազարյան Ա.**, **Անանյան Մ. և այլք,** Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Ե., ԵՊՀ հրատ., 2017:
9. **Եղիազարյան Ա.**, Հայրենիք-սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները (1960-ական թվականներից մինչև օրս), «Հայագիտության հարցեր», 2016, N 3, էջ 96-105:
10. **Եղիազարյան Ա.**, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները, «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք, 2015, N 1, էջ 59-76:

11. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., «Հայկական հանրագիտարան» հրատ., 2003:
12. «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», Ե., «Բավիկ» ՍՊԸ տպարան, 2011:
13. «Հայերն աշխարհում», հանրագիտական համառոտ բառարան, Ե., «Հայագիտակ» հրատ., 1995:
14. «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2013:
15. **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., Երևանի համալսարանի հրատ., 1985:
16. **Մելքոնյան Է.**, Հայաստան-սփյուռք հարաբերությունների փոխակերպումը 20-րդ դ. քաղաքական իշխանության խնդիրը, «Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2012, էջ 101-141:
17. **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Ե., «Նոյյան տապան», 1999:
18. **Մելքոնյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության և սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Ե., ԵՊՀ հրատ., 2012, էջ 102-122:
19. **Մելքոնյան Է.**, Ստալինի աշխարհաքաղաքական նկրտումները և հայերի հայրենադարձությունը 1946-1948 թթ., «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., «Լիմուշ» հրատ., 2009, էջ 22-31:
20. **Մինասյան Է.**, **Վարդանյան Ա.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ե., «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2010:
21. **Մինասյան Է.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.), Ե., ԵՊՀ հրատ., 2018:
22. **Միրզախանյան Ռ.**, Հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1956-1966 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, N 1, էջ 135-146:

23. **Միրզախանյան Ռ.**, Հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, «ԼՀԳ», 2008, N 2, էջ 209-218:
24. **Նահապետյան Կ.**, Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, «ԼՀԳ», 1997, N 3, էջ 25-32:
25. **Պետրոսյան Ք.**, Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011:
26. **Պետրոսյան, Ք.**, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2016, N 3, էջ 86-98:
27. **Ստեփանյան Ա.**, Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), ՊԲՀ, 2010, N 1, էջ 149-160:
28. **Ստեփանյան Ա.**, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010:
29. «Սփյուռքահայ կազմակերպություններ», Ե., «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», 2002:
30. **Վարդանյան Հ.**, Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պահանջները ըստ Խաչիկ Թեոլեոլյանի, «Հայագիտության հարցեր», 2016, N 2, էջ 95-108:
31. **Дятлов В., Мелконян Э.**, Армянская Диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 2009.
32. **Panossian R.**, Courting a Diaspora: Armenia-Diaspora relations since 1998, in «International Migration and Sending Countries», London, Palgrave Macmillan, 2003, pp. 140-168.
33. «The Armenians. Past and Present in the Making of National Identity», ed. by Ed. Herzig and M. Kurkchiyan, London, Routledge Curzon, 2005.
34. **Tölölyan Kh.**, Armenian Diaspora. In Encyclopedia of Diasporas, Immigrant and Refugee Cultures Around the World. Ed.: Ember M., Ember C., Skoggard I., New York, «Springer», 2005, pp. 35-46.
35. **Tölölyan Kh.**, Elites and Institutions in the Armenian Transaction, «Diaspora», A Journal of Transnational Studies, vol. 9, N 1, spring, 2000, pp. 107-136.

ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Հ.**, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, «ԼՀԳ», 2006, N 3, էջ 3-20:
2. **Ահարոնյան Գ.**, Մեծ երազի ճամբուն վրայ, Պեյրութ, «Ատլաս», 1964:
3. **Գասպարյան Ս.**, Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «ՊԲՀ», 1970, N 3, էջ 274-283:
4. **Դալլաքյան Կ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք I, Ե., «Մուղնի», 1999:
5. **Դալլաքյան Կ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ (1930-ականների վերջերից-1990-ականների սկիզբ), Ե., «Մուղնի» հրատ., 2007:
6. **Թեոլեոլյան Խ.**, Ռուսահայ նոր սփյուռքի կազմակվորման հնարավորությունը ժամանակակից սփյուռքագիտության տեսանկյունից, «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 9-22:
7. **Թոփուզյան Հ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1978:
8. **Թոփուզյան Հ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
9. **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային» տպ., 1968:
10. **Կապուտիկյան Ս.**, Քարավանները դեռ քայլում են, Ե., «Հայպետհրատ», 1964:
11. «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. VIII, Ե., 1967:
12. «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Ե., 2010:
13. «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.», Ե., «Հայաստանի ազգային արխիվ», 2010:

14. «Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.», Ե., «Հայաստանի ազգային արխիվ», 2010:
15. «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», պատասխանատու խմբագիր և կազմող պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Ե., հրատ. ՀՅ Դաշնակցության Բյուրոյի, 1999:
16. **Ղանալանյան Տ.**, Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Ե., «Արման Ասմանգուլյան ԱՁ» տպ., 2016:
17. **Ղասաբյան Զ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
18. **Մարության Հ.**, Հայ ինքնության պահպանման հիմնախնդիրները սփյուռքի համայնքներում XXI դարասկզբին, «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2018, էջ 65-77:
19. **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., «Մուղնի» հրատ., 2005:
20. **Մինասյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 2013:
21. **Մինասյան Ս.**, Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության ներգաղթը Հայաստան (1918-1920 թթ.), Ե., ԵՊՀ հրատ., 2007:
22. **Մխիթարյան Հ.**, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), «Էջմիածին», 1975, N 5, էջ 8-32:
23. **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Ե., «Լույսաս» ՍՊԸ տպարան, 2002:
24. **Ոսկանյան Ա.**, Սփյուռքահայության թվաքանակի դինամիկան 1962-1986 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 11, էջ 48-50:
25. «Պատմագրություն Հայ յեղափոխական դաշնակցության», քառահատոր շարք, հ. Դ, Ե., 2003:
26. «Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ» (1945-1991, ընտրանի), կազմող՝ Գ. Եազըճեան, Ե., հեղինակային հրատ., 2016:
27. **Վերանյան Կ., Նահապետյան Հ.** և այլք, Հայ համայնքը ԱՄՆ-ում, Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2010:

28. **Վրացյան Ս.**, Խոսք ընդ ուսուցչի, Տ. Տ. Գևորգ Զ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Ե., 2009, էջ 207-213:
29. **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Ե., «Հայաստան», 1993:
30. **Օհանեան Ս.**, Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016:
31. **Ֆիշենկճեան Ա.**, Սուրիոյ հայ համայնքի պատմութիւը 1946-1970 թթ., Ե., հեղինակային հրատ., 2018:
32. **Sheffer G.**, Diaspora Politics: At Home Abroad, Cambridge, Cambridge University Press, 2003.
33. **Tölölyan Kh.**, Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002, pp. 23-28.
34. **Tölölyan Kh.**, Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, «Diaspora», 1996, vol. 5, pp. 3-36.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. publishing.ysu.am
2. armin.am
3. armeniandiaspora.am
4. noravank.am
5. mindiaspora.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Կազմող՝ Արման Սամվելի Եղիազարյան

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Եղիազարյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 1.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am